ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

25 փետրվարի 2014, 5 – Ա

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2014թ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 19-րդ կետի 10-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի ռեկտորի առաջարկությունը՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդը, «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված կազմով, *որոշում է.*

Հաստատել դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2014թ. ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի նախագահ — *Հ.Բեդևյան*

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի անդամներ — *Հ.Թովմասյան*

Ե.Խունդկարյան

Հ.Ասատրյան

2014թ. փետրվարի 25

Ք.Երևան

Հավելված
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2014 թվականի
փետրվարի 25-ի թիվ 5-Ա որոշման

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է 2014թ. դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիրների) մասնագիտական պատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, գնահատման եղանակը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդիրների մոտ դատավորի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը հետևյալ ոլորտներում.

ա) Ընդհանուր մասնագիտական ոլորտ: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է սահմանադրական իրավունքի, մարդու իրավունքների մասին եվրոպական իրավունքի, միջազգային իրավունքի, ինչպես նաև մասնագիտական էթիկայի, իրավական և դատական բարեփոխումների հիմնահարցերին, ինչպես նաև կիրառական իրավաբանությանը: Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է սահմանադրական իրավունքի և արդարադատության, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության, ՀՀ-ում ընթացող իրավական և դատական բարեփոխումների, մասնագիտական էթիկայի, միջազգային իրավունքի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանը, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերի համարժեք

ընկալման և կիրառման, իրավական վերլուծությունների կատարման, իրավավերլուծական տեքստերի շարադրման, միջազգային իրավունքի կիրառման, իրավաչափ վարքագծի ընտրության կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

բ) Քաղաքացիական իրավունք և դատավարություն: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է քաղաքացիական իրավունքում և դատավարությունում առկա արդի հարցերին: Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի, ինչպես նաև սեփականության իրավունքի, պարտավորական իրավունքի, մտավոր սեփականության իրավունքի, քաղաքացիական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, աշխատանքային իրավունքի, ընտանեկան իրավունքի, ժառանգական իրավունքի, կորպորատիվ իրավունքի, սնանկության վարույթի և արդի այլ հիմնահարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը և կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև դատական վարույթ իրականացնելու, վերաբերելի իրավունքի վերհանման, վերլուծության և կիրառման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը:

գ) Վարչական իրավունք և դատավարություն: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է վարչական իրավունքում և դատավարությունում առկա արդի հարցերին: Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի, վարչական վարույթի, դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի, մաքսային իրավունքի, հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների, վարչական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, մտավոր սեփականության իրավունքի և արդի այլ հիմնահարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը և կարողությունների ձևավորմանը, ինչպես դատական վարույթ իրականացնելու, վերաբերելի իրավունքի վերհանման, վերլուծության և կիրառման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը:

դ) Քրեական իրավունք և դատավարություն: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է քրեական իրավունքում և

դատավարությունում առկա արդի հիմնահարցերին: Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է քրեական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի, քրեական իրավունքի, քրեական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի և արդի այլ հիմնահարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը և կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև դատական վարույթ իրականացնելու, վերաբերելի իրավունքի վերհանման, վերլուծության և կիրառման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը:

ե) Հարակից մասնագիտական ոլորտ: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է հասարակագիտական ուղղվածություն ունեցող հարցերին: Մասնագիտական պատրաստման արդյունքում ունկնդիրները ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ հռետորության, հաղորդակցության և բանակցությունների վարման գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև աշխատանքային գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ այլ կարողություններ և հմտություններ (ժամանակի կառավարում, սթրեսի կառավարում, ներազդման հոգեբանություն, առաջնորդություն և այլն):

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման և փորձաշրջանի եղանակներով:

5. Լսարանային ուսուցումն իրականացվում է ընդհանուր, հարակից և հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլների հիման վրա, ինչպես նաև հրավիրյալ դասախոսությունների միջոցով: Դասընթացների (ներառյալ՝ քննաշրջանի) ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 510 ակադեմիական ժամ (ներառյալ՝ 60 ակադեմիական ժամ քննաշրջանի համար)[1], իսկ հրավիրյալ դասախոսությունների ժամաքանակը՝ 20 ակադեմիական ժամ:

6. Հատուկ մասնագիտական մոդուլում ընդգրկված դասընթացները նախատեսված են միայն տվյալ մասնագիտացմամբ ունկնդիրների համար:

7. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր

[1] Վարչաիրավական մասնագիտացմամբ ունկնդրի համար դասընթացների (ներառյալ՝ քննաշրջանի) ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 400 ակադեմիական ժամ (ներառյալ՝ 50 ակադեմիական ժամ քննաշրջանի համար):

կատարման ենթակա առաջադրանքներ՝ ըստ քաղաքացիաիրավական, վարչաիրավական և քրեաիրավական ուղղությունների: Մեկ օր փորձաշրջանի տևողությունը սահմանվում է 10 ակադեմիական ժամ: Փորձաշրջանի ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 480 ակադեմիական ժամ[2]: Փորձաշրջանի ավարտին յուրաքանչյուր ունկնդիր գնահատվում է դրական կամ բացասական:

8. Ուսումնառության ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 1010 ակադեմիական ժամ:

9. Ուսումնառության տևողությունը սահմանվում է 8,5 ամիս (2014 թվականի մարտի 17-ից նոյեմբերի 28-ը)՝ ներառյալ ավելի քան 3 ամիս տևողությամբ փորձաշրջանը[3] (հունիսի 30-ից հոկտեմբերի 10-ը):

[2] Վարչաիրավական մասնագիտացմամբ ունկնդրի համար փորձաշրջանի ժամաքանակը 590 ժամ է:

[3] Վարչաիրավական մասնագիտացմամբ ունկնդրի համար փորձաշրջանն սկսում է հունիսի 23-ից:

II. Ուսումնառության ժամանակային կառուցվածքը

	Դասընթացների ժամաքանակ	**Քննաշրջանի ժամաքանակ**	**Հրավիրյալ մասնագետների դասախոսությունների ժամաքանակ**	**Փորձաշրջանի ժամաքանակ**	**Ընդհանուր ժամաքանակ**
Ուսուցման 1-ին հատված (մարտ 17-մայիս 2)	**120 ժամ** (8 դասընթաց) (մարտ 17-ապրիլ 18)	**16 ժամ** (8 քննություն) (ապրիլ 21-մայիս 2)	**10 ժամ**	-	**146 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (մայիս 5-հունիս 20)	**120 ժամ** (8 դասընթաց) (մայիս 5-հունիս 6)	**16 ժամ** (8 քննություն) (հունիս 9-հունիս 20)	-	-	**136 ժամ**
Ուսուցման 3-րդ հատված (հունիս 23-օգոստոս 8)	**90 ժամ** (6 դասընթաց) (հունիս 23-հուլիս 25)	**12 ժամ** (6 քննություն) (հուլիս 28 - օգոստոս 8)	-	**120 ժամ** (հունիսի 30-օգոստոս 8)	**222 ժամ**
Ուսուցման 4-րդ հատված (օգոստոս 11-հոկտեմբեր 10)	-	-	-	**360 ժամ** (օգոստոս 11-հոկտեմբ. 10)	**360 ժամ**
Ուսուցման 5-րդ հատված (հոկտեմբեր 13-նոյեմբեր 28)	**120 ժամ** (8 դասընթաց) (հոկտեմբ. 13-նոյեմբեր 14)	**16 ժամ** (8 քննություն) (նոյեմբեր 17-նոյեմբեր 28)	**10 ժամ**	-	**146 ժամ**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**450 ժամ**	**60 ժամ**	**20 ժամ**	**480 ժամ**	**1010 ժամ**

III. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ցանկ

1. Ընդհանուր մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-001-14	Իրավունքի դատական զարգացման արդի հարցերը	20
2.	J-002-14	ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները	20
3.	J-003-14	ՄԻԵԴ իրավաբանության հիմունքները և արդի միտումները	20
4.	J-004-14	Իրավաբանական գիր և վերլուծություն	20
5.	J-005-14	Դատավորի մասնագիտական էթիկա	10
6.	J-006-14	ՀՀ իրավական և դատական բարեփոխումների հիմունքները	10
7.	J-007-14	ՀՀ դատարանների կողմից միջազգային իրավունքի կիրառման տեսական և գործնական հարցերը	10

2. Հարակից մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
8.	G-001-14	Հաղորդակցություն և բանակցություններ	20
9.	G-002-14	Արդարադատություն և էթիկա	20
10.	G-003-14	Արդարության ուսմունքներ	20
11.	G-004-14	Փաստարկում և հռետորաբանություն (ճարտասանություն)	20
12.	G-005-14	Սթրեսի կառավարում	10
13.	G-006-14	Ժամանակի կառավարում	10
14.	G-007-14	Առաջնորդություն (leadership)	10
15.	G-008-14	Ներազդման հոգեբանություն	10
16.	G-016-14	Դատավորի հոգեբանության արդի հարցերը	10

3. Հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

2.1. Քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
17.	C-001-14	ՀՀ պարտավորական իրավունքի արդի հարցերը	20
18.	C-002-14	ՀՀ սեփականության իրավունքի արդի հարցերը	20
19.	C-003-14	ՀՀ կորպորատիվ իրավունքի արդի հարցերը	20
20.	C-004-14	ՀՀ սնանկության վարույթի արդի հարցերը	20
21.	C-005-14	ՀՀ մտավոր սեփականության իրավունքի արդի հարցերը	20
22.	C-006-14	Դատական նիստի անցկացման հմտությունները քաղաքացիական դատավարությունում	20
23.	C-007-14	Միջազգային մասնավոր իրավունքի արդի հարցերը	20
24.	C-008-14	ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերը	10
25.	C-009-14	ՀՀ ժառանգական իրավունքի արդի հարցերը	10
26.	C-010-14	ՀՀ ընտանեկան իրավունքի արդի հարցերը	10
27.	C-011-14	Դատական ակտի մշակման հմտություններ	10
28.	C-012-14	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը	10
29.	C-013-14	ՄԻԵԴ նախադեպային իրավունքը քաղաքացիական դատավարությունում	10
30.	C-014-14	ՄԻԵԴ նախադեպային իրավունքը սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում	10

2.2. Վարչաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
31.	A-002-14	ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը	20
32.	C-005-14	ՀՀ մտավոր սեփականության իրավունքի արդի հարցերը	20
33.	A-001-14	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը վարչական գործերով	10
34.	A-003-14	ՀՀ վարչական վարույթի արդի հարցերը	10
35.	A-004-14	ՀՀ հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների արդի հարցերը	10
36.	A-005-14	Ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման արդի հարցերը Հայաստանի Հանրապետությունում	10
37.	A-006-14	Դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի արդի	10

		հարցերը Հայաստանի Հանրապետությունում	
38.	A-007-14	ՀՀ մաքսային իրավունքի արդի հարցերը	10
39.	C-011-14	Դատական ակտի մշակման հմտություններ	10

3.3 Քրեաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

N	**Դասիչ**	**Անվանում**	**Ժ/ք**
40.	Q-001-14	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով	20
41.	Q-002-14	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը	20
42.	Q-003-14	ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը	20
43.	Q-004-14	Դատաքննության անցկացման հմտությունները քրեական դատավարությունում	20
44.	Q-005-14	ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քրեաիրավական հարցերով	20
45.	Q-006-14	ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քրեադատավարական հարցերով	20
46.	Q-007-14	Դատական երաշխիքներով վարույթի հմտություններ	20
47.	Q-008-14	Նախնական դատալսումների անցկացման հմտություններ	10
48.	Q-009-14	Լրացուցիչ դատալսումների անցկացման հմտություններ	10
49.	Q-010-14	Համագործակցության և համաձայնեցման վարույթներով դատալսումների հմտություններ	10
50.	Q-011-14	Անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները	10
51.	Q-012-14	Դատական ակտի մշակման հմտություններ	10
52.	Q-013-14	Պատժի նշանակման արդի հարցերը ՀՀ-ում	10
53.	Q-014-14	Քրեական վարույթով միջազգային փոխօգնության արդի հարցերը	10

IV. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) համառոտ նկարագիրը

1. J-001-14. Իրավունքի դատական զարգացման արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է իրավունքի դատական զարգացման ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման և հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՄԻԵԴ ակտերը, ինչպես նաև ՀՀ սահմանադրական և ՀՀ վճռաբեկ դատարանների որոշումները որպես պարտադիր նախադեպեր կիրառելիս դրանց վերաբերելիության և կիրառելիության հարցի լուծման առանձնահատկությունները, դրանց տեսանկյունից իրենց վարույթում գտնվող գործերով վերաբերելի փաստական հանգամանքների առանձնացումն ու տարբերակումը, տարբեր փաստական հանգամանքներից իրավունքի նույնանման կամ տարբերվող հարցի ձևակերպումը, կարգավորիչ նորմերի հակասական կամ հակաիրավական լինելու կամ ընդհանրապես բացակայելու դեպքում դատական մեկնաբանության ազատության և հայեցողության սահմանները և իրավունքի դատական զարգացմանը վերաբերող այլ հարցեր:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

2. J-002-14. ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները

Դասընթացը պայմանավորված է սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է սահմանադրական իրավունքի գիտության առարկայի, մեթոդների, սահմանադրական իրավունքի գիտության զարգացման արդի միտումների, Հայաստանի Հանրապետության դատական իշխանության սահմանադրական հիմունքների (դատական իշխանության մարմինների համակարգի կազմակերպման և գործունեության կարգի, դատավորների սահմանադրական կարգավիճակի), սահմանադրական արդարադատության (սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակի, կազմակերպման և գործունեության կարգի, սահմանադրական դատարանի լիազորությունների) վերաբերյալ հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

3. J-003-14. ՄԻԵԴ իրավաբանության հիմունքները և արդի միտումները

Դասընթացը պայմանավորված է ՄԻԵԴ գործունեության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՄԻԵԴ կողմից մշակված իրավական հայեցակարգերի բովանդակության, դրանց իրավակիրառ արժեքի և զարգացման միտումների, ՄԻԵԴ հիմնական նպատակների, իրավազորության շրջանակի, գանգատների ընդունելիության պայմանների, գործերի քննության կարգի, վճիռների կատարման հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

4. J-004-14. Իրավաբանական գիր և վերլուծություն

Դասընթացը պայմանավորված է համոզիչ իրավական վերլուծությունների կատարման և շարադրման, իրավամեկնաբանողական հնարքների կիրառման ոլորտում կարողությունների և հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է իրավավերլուծական ռազմավարությունների ընտրության, IRAC համակարգով իրավական վերլուծությունների կատարման և շարադրման, օրենսդրական և նախադեպային տեքստերի հետ աշխատանքում իրավամեկնաբանողական հնարքների կիրառման, իրավական վերլուծությունների լեզվական որակների ապահովման հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

5. J-005-14. Դատավորի մասնագիտական էթիկա

Դասընթացը պայմանավորված է դատավորի մասնագիտական էթիկայի կանոնների հետ կապված գիտելիքներ հաղորդելու և դրանք կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է արդարադատություն իրականացնելիս և ոչ դատական գործունեության ընթացքում դատավորի վարքագծի կանոնների, դատավորների էթիկայի հարցերով վարույթի հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

6. J-006-14. ՀՀ իրավական և դատական բարեփոխումների հիմունքները

Դասընթացը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող իրավական և դատական բարեփոխումների գաղափարական հենքի, դրանց նպատակների և ուղղվածության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է Հայաստանի Հանրապետության 2012-2016 թվականների իրավական և դատական բարեփոխումների ռազմավարության գաղափարախոսությունը և նպատակները, բարեփոխումներից ակնկալվող արդյունքը, կոնկրետ միջոցառումների նշանակությունը և բովանդակությունը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

7. J-007-14. ՀՀ դատարանների կողմից միջազգային իրավունքի կիրառման տեսական և գործնական հարցերը

Դասընթացը պայմանավորված է միջազգային իրավունքի նորմերի կիրառման վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է միջազգային իրավունքի և ներպետական իրավունքի հարաբերակցության, միջազգային պայմանագրերի մեկնաբանման և անմիջական կիրառման, միջազգային սովորույթային իրավունքի, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած նորմերի ու սկզբունքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանների կողմից կայացված դատական ակտերի կիրառման հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

8. G-001-14. Հաղորդակցություն և բանակցություններ

Դասընթացն անհրաժեշտ է Ունկնդիրներին իրենց պաշտոնեական գործառույթների արդյունավետ իրականացման կարևոր գրավական հանդիսացող հաղորդակցությունների և բանակցությունների վերաբերյալ բազային գիտելիքների ձեռքբերման համար: Նշվածը թույլ կտա ձևավորել կառուցողական փոխհարաբերություններ և կանխել հնարավոր ռիսկերը պաշտոնեական և ոչ-պաշտոնեական գործունեության ընթացքում:

Դասընթացը ներառում է հաղորդակցության էությունը և տեսամեթոդական հիմքերը, հաղորդակցության արգելքները և դրանց հաղթահարման ուղիները, մանիպուլյացիան և հակամանիպուլյացիայի միջոցները, բանակցությունների էությունը, ոճերը, բանակցային գործընթացի ժամանակակից առաջադիմական մոտեցումները, արդյունավետ փաստարկների կառուցումը բանակցությունների ընթացքում:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

9. G-002-14. Արդարադատություն և էթիկա

Դասընթացը վերաբերում է էթիկայի հիմնախնդիրներին՝ արդարադատության իրականացման գործընթացում ծագող հարցերի համատեքստում: Դասընթացն անհրաժեշտ է բարոյական գիտակցության զարգացման տեսանկյունից կարևորություն ներկայացնող տեսական գիտելիքների ձեռքբերման, արդարադատության համակարգում հրամայական (իմպերատիվ) կամ անհրաժեշտ վարքագիծ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է սոցիալական գործողության ու բարոյական վարքագծի միջև կապը, բարոյականության և իրավունքի հարաբերակցությունը, բարոյական պարտքին ու բարձրագույն բարիքին վերաբերող դիրքորոշումների քննարկումը և այլն:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

10. G-003-14. Արդարության ուսմունքներ

Դասընթացը կարևոր է արդարության տարբեր հայեցակարգերի իմացությամբ արդարադատության համակարգում մարդակենտրոն մոտեցումները հիմնավորելու և հրամայական դարձնելու համար:

Դասընթացը ներառում է արժեքային մոնիզմի և արժեքային պլյուրալիզմի հայեցակարգերի ընդհանուր բնութագիրը, կոմունիտարիզմի և ազատականության վեճը, արդիականության համատեքստում արդարության նպատակաբանական, պլյուրալիստական, լիբերտարիանիստական, էգալիտարիստական հայեցակարգերի հիմնարար գաղափարների քննարկումը և այլն:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

11. G-004-14. Փաստարկում և հռետորաբանություն (ճարտասանություն)

Դասընթացն անհրաժեշտ է ապացուցման, հերքման, հիմնավորման, զրուցակիցների մոտ համոզմունքի ձևավորման, տպավորիչ ելույթի ու արդյունավետ բանավեճի տեխնոլոգիաների տիրապետման առումով:

Դասընթացը ներառում է փաստարկման գործընթացի բաղադրիչները, եղանակները, փաստարկման համակարգին ներկայացվող պահանջները, ավանդական և ժամանակակից հռետորիկայի զինանոցը, առավել հաճախ հանդիպող սխալները, բանավեճի ընթացքում կիրառվող կառուցողական և ապակառուցողական տեխնոլոգիաները և վերջին ներսչեզոքացման մեթոդաբանական սկզբունքները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

12. G-005-14. Սթրեսի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է Ունկնդիրների մոտ ինքնահետազոտման և ինքն իրեն հոգեբանական օգնություն ցուցաբերելու մոտիվացիա ձևավորելու, սթրեսի կառավարման մեթոդներին տիրապետելու համար:

Դասընթացը ներառում է ինքնակարգավորման և ինքնակառավարման գործընթացների հոգեբանական բնութագրությունը, սթրեսի հիմքերը և տեսակները, ինքնակարգավորման տեսական մոտեցումները, սթրեսի կառավարման մեթոդների ընդհանուր բնութագրություն և վերլուծություն, ինքնաճանաչումը, ինքնավերահսկումը և ինքնակազմակերպումը սթրեսի կառավարման գործընթացում, սթրեսի կառավարումը և ինքնագիտակցությունը, ինքնակարգավորման մեխանիզմները և մակարդակները, մարդկային մարմինը որպես էներգետիկ համակարգ, ինքնակարգավորման ձևերի դասակարգումը մկանների թուլացման հիմքի վրա, ռելաքսային վիճակի համակարգը, գործառույթները և մեխանիզմները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

13. G-006-14. Ժամանակի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է Ունկնդիրների մոտ ժամանակի արդյունավետ պլանավորման, կառավարման, ինչպես նաև անձնական և մասնագիտական կազմակերպվածության մակարդակի բարձրացման մասին գիտելիքների և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ժամանակի և նրա նշանակության մասին հասկացությունը, ժամանակը՝ որպես անձի էներգետիկ պոտենցիալ, ժամանակի տեսակները, ժամանակի ընկալման տեսակները, գործունեության կառուցվածքը և դրա ժամանակային բնութագրիչները, մարդը և ժամանակը ճգնաժամային իրավիճակներում, մասնագետի ժամանակային կոմպետենտություն, ժամանակի հիմնական «թակարդները», ժամանակի կորստի և ժամանակային նախապատվությունների վերլուծություն, խրոնոմետրաժ, ժամանակի կառավարման սկզբունքներն ու ռազմավարությունները, գլոբալ նպատակների որոշումը, երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը, կարճաժամկետ և օպերատիվ պլանները, նախապատվությունների որոշումը ABC վերլուծության միջոցով, Էյզենհաուերի սկզբունքը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

14. G-007-14. Առաջնորդություն (leadership)

Դասընթացն անհրաժեշտ է տարբեր ինստիտուցիոնալ կառույցների առջև դրված նպատակներին հասնելու արդյունավետ միջոցների վերաբերյալ տեսական գիտելիքների ձեռքբերման և պրակտիկ հմտությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է կառավարումն ու առաջնորդությունը, գործընթացների կառավարումն ըստ մակարդակների, ինստիտուցիոնալ-օրգանական զարգացումը, ռազմավարական կառավարումն ու պլանավորման գործընթացը, ծրագրի ցիկլի կառավարման բաղադրիչները, ՄՌԻԿ (մարդկային ռեսուրսների իննովացիոն կառավարման) մարդակենտրոն մոտեցումները, կազմակերպությունների զարգացման փուլերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

15. G-008-14. Ներազդման հոգեբանություն

Դասընթացն անհրաժեշտ է ներազդման հոգեբանական հիմքերն իմանալու, ներազդման և մանիպուլյացիայի տեխնիկաներին ծանոթանալու և դրանցից պաշտպանվելու համար:

Դասընթացը ներառում է ներազդումը որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, հոգեբանական ներազդման էությունը, մարդու հոգեկանը և սոցիալ-հոգեբանական ազդեցությունը, ներազդման նպատակները, հոգեբանական անվտանգության խնդիրը ժամանակակից հասարակության մեջ, ներազդման միջոցները և տեսակները, քաղաքակիրթ հոգեբանական ներազդում, ներազդման սկզբունքները, մեխանիզմները և ավտոմատիզմները, մանիպուլյացիայի սահմանումը, դրսևորումները և տեսակները, խմբի ազդեցությունը անձի վրա, խմբային ներազդման օրինաչափությունները և եղանակները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

16. G-016-14. Դատավորի հոգեբանության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է դատավորի հոգեբանության արդի միտումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու հմտություններ ձևավորելու և կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դատավորի գործունեության համար անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական, անձնային և այլ պահանջների, դատական հարցաքննության հոգեբանության, դատական վիճաբանությունների հոգեբանության, դատավորի կողմից դատական ակտ կայացնելու, ինչպես նաև պատժի նշանակման հոգեբանության հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

17. C-001-14. ՀՀ պարտավորական իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է պարտավորական իրավունքի նոր իրավական դիրքորոշումները մատուցելու, տվյալ ոլորտում առկա հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է պայմանագրային և քվազի-պայմանագրային (անհիմն հարստացման, առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունների) պարտավորությունների, արտապայմանագրային (դելիկտային) և քվազի-դելիկտային (աշխատողի պատճառած վնասի համար պատասխանատվության) պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հետ կապված իրավահարաբերություններից բխող հարցերը, ապահովագրական իրավահարաբերություններից բխող հիմնահարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

18. C-002-14. ՀՀ սեփականության իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է սեփականության իրավունքի ոլորտում առկա հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է սեփականության իրավունքի ձեռքբերման, դադարման, ընդհանուր սեփականության, ինչպես նաև սեփականության իրավունքի պաշտպանության իրավահարաբերություններից բխող հարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

19. C-003-14. ՀՀ կորպորատիվ իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է կորպորատիվ իրավունքում առկա հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է կորպորատիվ կառավարման սկզբունքների, կորպորատիվ իրավունքի սուբյեկտների, դրանց ստեղծման, վերակազմակերպման, լուծարման, գործունեության կազմակերպման, մասնակիցների իրավունքների և պարտականությունների, արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման, կորպորատիվ վեճերի և այլ հարցերի հետ կապված իրավահարաբերություններից բխող հիմնահարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

20. C-004-14. ՀՀ սնանկության վարույթի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է սնանկության վարույթում առկա հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է սնանկության գործերի քննության կարգի և առանձնահատկությունների, սնանկ ճանաչելու հարցի լուծման, սնանկության վարույթի ընթացքում կայացվող դատական ակտերի, մորատորիումի, համարժեք պաշտպանության, ինչպես նաև սնանկ ճանաչված անձի և պարտատերերի իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

21. C-005-14. ՀՀ մտավոր սեփականության իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է ապրանքային նշանի և մտավոր գործունեության արդյունքների իրավական կարգավորման և դրա պաշտպանության արդի հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների և ապրանքի ծագման տեղանունների նկատմամբ իրավունքների ծագման, իրավունքների իրացման, դրանց իրավական պաշտպանության, ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների խախտումների հետ կապված հարցերը, մտավոր գործունեության արդյունքների (գիտության, գրականության և արվեստի ստեղծագործություններ, կատարումներ, գյուտեր, օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ) նկատմամբ

գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների ծագման, դրանց իրացման և իրավական պաշտպանության ոլորտում ծագող հիմնահարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիավական և վարչահիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

22. C-006-14. Դատական նիստի անցկացման հմտությունները քաղաքացիական դատավարությունում

Դասընթացն անհրաժեշտ է քաղաքացիական դատավարությունում դատական նիստերի անցկացման վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, կարողությունների և հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է գործը դատաքննության նախապատրաստելու, գործի դատաքնության, առանձին տեսակի գործերի վարույթների անցկացման, ինչպես նաև միջնորդություններին արձագանքման հետ կապված գործնական հարցերը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

23. C-007-14. Միջազգային մասնավոր իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է միջազգային մասնավոր իրավունքում առկա հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործերի վարույթը, միջազգային հարաբերություններում իրավական օգնության սկզբունքները, օտարերկրյա պետությունների դատարանների և արբիտրաժային տրիբունալների վճիռները և որոշումները ճանաչելը, օտարերկրյա իրավունքի կիրառման սկզբունքները, օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիաիրավական հարաբերությունների նկատմամբ կիրառվող իրավունքը որոշելը և այդ հարցերի կապակցությամբ ՀՀ դատական պրակտիկայում առկա հիմնախնդիրները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

24. C-008-14. ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է աշխատանքային իրավունքում առկա հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է աշխատանքային իրավահարաբերությունների ծագման, դադարման, աշխատանքային իրավահարաբերությունների կողմերի իրավունքների պաշտպանության, պատասխանատվության, աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության և վերահսկողության հարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

25. C-009-14. ՀՀ ժառանգական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը անհրաժեշտ է ժառանգական իրավունքի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգության, ժառանգության ընդունման, դրա ձևակերպման, բաժանման, ժառանգությունից հրաժարման, ժառանգության պահպանման և կառավարման, ժառանգության հետ կապված ծախսերի հատուցման հարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

26. C-010-14. ՀՀ ընտանեկան իրավունքի արդի հարցերը

Դասընթացը անհրաժեշտ է ընտանեկան իրավունքում առկա հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ամուսնության կնքման և դադարման, ամուսինների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների և պարտականությունների, երեխայի դաստիարակությանը ծնողների մասնակցության, ալիմենտային պարտավորությունների, ծնողների իրավունքների և պարտավորությունների, երեխայի իրավունքների, խնամակալության և հոգաբարձության մարմնի դերի և նշված ոլորտներում ՀՀ դատական

պրակտիկայում առկա հիմնահարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

27. C-011-14. Դատական ակտի մշակման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատական ակտերին՝ կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, կարողությունների և հմտությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է դատական վարույթների ընթացքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերին ներկայացվող կառուցվածքային և բովանդակային պահանջների վերաբերյալ գործնական հարցերը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական և վարչաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

28. C-012-14. ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում ծագող հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանց կիրառման կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու, ապացուցման, դատաքննության, ինչպես նաև հատուկ վարույթի գործերի քննության ընթացքում ծագող հիմնահարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

29. C-013-14. ՄԻԵԴ նախադեպային իրավունքը քաղաքացիական դատավարությունում

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է Եվրոպական կոնվեցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և Հայաստանի Հանրապետության նկատմամբ դրա կիրառման հարցերը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

30. C-014-14. ՄԻԵԴ նախադեպային իրավունքը սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված սեփականության իրավունքի, ինչպես նաև արդարացի բավարարման իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և Հայաստանի Հանրապետության նկատմամբ դրա կիրառման հարցերը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

31. A-002-14. ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է նոր վարչական դատավարության օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանց կիրառման կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է գործը դատաքննության նախապատրաստման, դատաքննության, ապացուցման, հայցի ապահովման, վերաքննիչ և վճռաբեկ վարույթների, հատուկ վարույթի գործերի քննության ընթացքում ծագող հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

32. C-005-14. ՀՀ մտավոր սեփականության իրավունքի արդի հարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 21-րդ կետի ներքո:

33. A-001-14. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը վարչական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության արդյունքում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ արտահայտվելու ազատության իրավունքի, սեփականության իրավունքի) խախտումների, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

34. A-003-14. ՀՀ վարչական վարույթի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է վարչական վարույթում առկա արդի հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է վարչական ակտի պարտադիր հատկանիշների, վարչական վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանության, վարչական ակտերի դատական բողոքարկման, դատարանի կողմից դրանց իրավաչափության գնահատման, վարչական վարույթի և հատուկ նորմերի հարաբերակցության հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

35. A-004-14. ՀՀ հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքով, պետական հարկերին փոխարինող շրջանառության հարկերի, հաստատագրված վճարների և արտոնագրային վճարների ոլորտը կարգավորող, ինչպես նաև այլ իրավական ակտերով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

36. A-005-14. Ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման արդի հարցերը Հայաստանի Հանրապետությունում

Դասընթացն անհրաժեշտ է ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ստուգումների և ուսումնասիրությունների անցկացման կարգի, ստուգման ժամկետների, ստուգման արդյունքների ամփոփման, վերստուգումների, ստուգման վարույթում տնտեսվարող սուբյեկտների և ստուգումն իրականացնող անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

37. A-006-14. Դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի արդի հարցերը Հայաստանի Հանրապետությունում

Դասընթացն անհրաժեշտ է դատական ակտերի հարկադիր կատարման վարույթում առկա հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է կատարողական վարույթին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանության, կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողի կայացրած որոշումների դատական բողոքարկման, դատարանի կողմից դրանց իրավաչափության գնահատման, դատական ակտերի կատարման և Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի հարաբերակցության հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

38. A-007-14. ՀՀ մաքսային իրավունքի արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է մաքսային իրավունքի ոլորտում առկա հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է մաքսային իրավախախտումների, մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման, դրանց մաքսային արժեքի որոշման, մաքսային ռեժիմների, մաքսային միջնորդական գործունեության, ինչպես նաև հայտարարագրման հարցերը:

Դասընթացը նախատեսված է վարչաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

39. C-011-14. Դատական ակտի մշակման հմտություններ

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տես 27-րդ կետի ներքո:

40. Q-001-14. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողությունների ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ անձի ազատության և անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

41. Q-002-14. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների վերաբերյալ գիտելիքներ մատուցելու և կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քրեական նոր օրենսգրքի հայեցակարգային հիմնադրույթները, քրեաիրավական ինստիտուտների զարգացման միտումները և հեռանկարները, ինչպես նաև գործնականում առաջացող հանցավոր արարքների ճշգրիտ որակման հարցերը և դրանց լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառական փորձը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

42. Q-003-14. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում սահմանված իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային բնութագրին, քրեական դատավարության սկզբունքների նոր համակարգին, քրեական դատավարության նոր հասկացութային ապարատին, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության նոր կառուցակարգերին վերաբերող հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

43. Q-004-14. Դատաքննության անցկացման հմտությունները քրեական դատավարությունում

Դասընթացը պայմանավորված է քրեական դատավարությունում դատաքննության անցկացման հմտությունների վերաբերյալ Ունկնդիրների ելակետային գիտելիքների ծավալն ընդլայնելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ու հմտություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հիմնական դատալսումների անցկացման վարութային ձևին, այդ թվում՝ դատական նիստի ընթացակարգի պահպանմանը, հարցաքննությունների

կատարմանը, ապացույցների հետազոտմանը, միջնորդություններին արձագանքմանը, ինչպես նաև վերդիկտի կայացմանը վերաբերող գործնական հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

44. Q-005-14. ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քրեաիրավական հարցերով

Դասընթացն անհրաժեշտ է քրեաիրավական հարցերով ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է քրեական իրավունքի առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

45. Q-006-14. ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քրեադատավարական հարցերով

Դասընթացն անհրաժեշտ է քրեադատավարական հարցերով ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական դատավարության առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

46. Q-007-14. Դատական երաշխիքներով վարույթի հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում դատական վերահսկողության (մինչդատական վարույթի դատական երաշխիքների) ոլորտին վերաբերող նոր իրավակարգավորումների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք պատշաճ կենսագործելու կարողությունների ու հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է խափանման միջոցի կիրառման կամ վերացման, ապացուցողական գործողության (քննչական և գաղտնի քննչական գործողության) թույլատրման, գույքի արգելադրման, մինչդատական ակտերի վիճարկման, ցուցմունքի դեպոնացման դատական վարույթների վերաբերյալ գործնական հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

47. Q-008-14. Նախնական դատալսումների անցկացման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է նախնական դատալսումների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ու հմտություններ ձևավորելու անհրաժեշությամբ:

Դասընթացը ներառում է նախնական դատալսումների նշանակման, դատալսումների ընթացքում քննարկման ենթակա հարցերի և անցկացման կարգի վերաբերյալ գործնական հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

48. Q-009-14. Լրացուցիչ դատալսումների անցկացման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատարանում լրացուցիչ դատալսումների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է լրացուցիչ դասալսումների նշանակման, դատալսումների ընթացքում քննարկման ենթակա հարցերի և անցկացման կարգի վերաբերյալ գործնական հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

49. Q-010-14. Համագործակցության և համաձայնեցման վարույթներով դատալսումների հմտություններ

Դասընթացը պայմանավորված է քրեական վարույթ իրականացնելիս համաձայնեցման և համագործակցության վարույթներով դատալսումների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, կարողությունների ու հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է համագործակցության վարույթ կիրառելու հիմքերի, մինչդատական համաձայնագրի կազմելու կարգի, համագործակցության վարույթով իրականացվող նախաքննության, դատաքննություն անցկացման և դատավճռի կայացման, համաձայնեցման վարույթ կիրառելու հիմքերի, համաձայնության վերաբերյալ բանակցությունների, դատական քննության անցկացման և դատավճռի կայացման վերաբերյալ գործնական հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

50. Q-011-14. Անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է անչափահասների նկատմամբ իրականացվող մինչդատական և դատական վարույթների անցկացման առանձնահատկությունների վերաբերյալ հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

51. Q-012-14. Դատական ակտի մշակման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատական ակտերին՝ կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, կարողությունների և հմտությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է դատական վարույթների ընթացքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերին ներկայացվող կառուցվածքային և բովանդակային պահանջների վերաբերյալ գործնական հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

52. Q-013-14. Պատժի նշանակման արդի հարցերը Հայաստանի Հանրապետությունում

Դասընթացը պայմանավորված է պատժողական քաղաքականության հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժի տեսակների և նշանակման հիմնահարցերի, այդ թվում պատժի նշանակման հարցում քրեադատավարական նորմերի ազդեցության (պատժատեսակի, պատժաչափի, պատժից ազատելու, պայմանականորեն այն չկիրառելու, հետաձգելու, մեղմ կամ խիստ պատիժ նշանակալու չափորոշիչների) վերաբերյալ հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

53. Q-014-14. Քրեական վարույթով միջազգային փոխօգնության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է միջազգային փոխօգնության արդի հարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման համար:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ, այդ թվում միջազգային պայմանագրերով նախատեսված միջազգային փոխօգնության տեսակների, եղանակների, սուբյեկտների, պայմանների վերաբերյալ հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացման Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

Արդարադատության ակադեմիայի

կառավարման խորհրդի նախագահ *Հ.Բեդևյան*

Արդարադատության ակադեմիայի

կառավարման խորհրդի անդամներ *Հ.Թովմասյան*

Ե.Խունդկարյան

Հ.Ասատրյան